Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕՐԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ ԵՎ ՆԱԻՐՈՒՀԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՓԱՐԻԶ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն ազգանուն.** Օրի Ալավերդյան, Նաիրուհի Ավետիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Օրի Ալավերդյան՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ,
   Նաիրուհի Ավետիսյան՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության պետի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ֆրանսիայի Հանրապետություն, Փարիզ, 2022 թվականի հոկտեմբերի 5-8:

4. **Հրավիրող կողմը.**
   Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, BEPS ծրագիր

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   BEPS ծրագիր ներառական հարթակի (Inclusive Framework) 14-րդ տարեկան համաժողովին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները.**
   - Թվայնացման արդյունքում առաջացող միջազգային հարկային խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ և միջազգային համաձայնագերի նախագծերի քննարկում (BEPS գործողություն 1)
   - Հարկային քաղաքականություն, կլիմայի փոփոխություններ և գլոբալ էներգետիկ ճգնաժամ,
   - Հարկային թափանցիկություն, Global Forum-ի շրջանակներում տեղի ունեցող փոփոխություններ, կրիպտոակտիվների հաշվետվողականության համակարգեր,
   - Հարկային բարեվարքություն,
   - «Հարկային տեսուչներ առանց սահմանների» ծրագրի քննարկում և տարեկան հաշվետվության ներկայացում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Գործուղման ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել BEPS ծրագրի քարտուղարության մի շարք մասնագետների հետ, որոնց հետ քննարկվել են BEPS ծրագրով նախատեսված նվազագույն ստանդարտների ՀՀ-ում ներդրման գործընթացին վերաբերող հարցեր, Վնասակար հարկման ռեժիմների բարեփոխման ուղղությամբ ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման հնարավոր ուղղությունները, ինչպես

նաև «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայի վավերացումից հետո իրականացման ենթակա քայլերը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
   Բացակայում են:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
   Բացակայում են.

Recoverable Signature

X

ՕՐԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Signed by: ALAVERDYAN ORI 3903850632

Օրի Ալավերդյան

13 հոկտեմբերի 2022 թվական